ՀԱՐՑ N 3

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության ս.թ. ապրիլի 22-ի նիստի օրակարգում ընդգրկված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Նախագծով նախատեսվում է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) քաղաքային որոնողափրկարարական թիմի՝ ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի արտաքին որակավորման նախապատրաստական աշխատանքների ապահովման նպատակով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացնել 29,550.9 հազար դրամ: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Նախագծով նախատեսված հարցը գտնում ենք նպատակահարմար կարգավորել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով Նախարարությանը նախատեսված ընդհանուր միջոցների հաշվին:

Նախագծի Հավելված 3-ի (այսուհետ՝ Հավելված) գնումների պլանի 1-ին սյունակում անհրաժեշտ է համապատասխան գնման առարկայի CPV դասակարգչից հետո նշել հերթական համարակալման թիվը:

Միաժամանակ, ոչ բավարար հիմնավորումներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի Հավելվածի գնումների պլանում ներառված գնման առարկաները ձեռք բերել մրցակցային ընթացակարգի կիրառմամբ՝ նկատի ունենալով, որ դրանց կազմակերպման համար կպահանջվի շուրջ 15 օր: